ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝ +37491435136,
Էլ. հասցե՝ foi@foi.am
www.foi.am

Խորհրդատվություն

Լրագրողի բարձրաձայնած խնդիրը

Լրագրող (CivilNet) Գևորգ Թոսունյանը ֆեյսբուք (facebook) սոցիալական ցանցում հրապարակում է արել այն մասին, որ տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Երևանի քաղաքապետարան՝ խնդրելով տրամադրել հատման ենթակա ծառերի ամբողջական ցուցակը՝ դրանց ճշգրիտ տեղադրությամբ, յուրաքանչյուր ծառի վերաբերյալ մասնագիտական եզրակացությամբ և այլ անհրաժեշտ տեղեկություններով: Քաղաքապետարանից պատասխանել էին, որ փաստաթղթերի ծավալային քանակության պատճառով դրանց կարելի է ծանոթանալ միայն կազմակերպություն այցելելով: Լրագրողը նշել էր, որ 2024 թվականի դեկտեմբերի 11-ին, փորձել է տեղում ծանոթանալ Երևանում իրականացվող ծառահատումների հաստատված փաստաթղթերին, այդ կապակցությամբ տեղում հանդիպելով «Կանաչապատում և շրջակա միջավայրի պաշտպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանին: Լրագրողն ի թիվս այլնի նկարագրել է իր ակնկալած փաստաթղթերին ծանոթանալու փորձը՝ նշելով, որ ՀՈԱԿ-ի տնօրենը պայման է սահմանել, որ տեղեկություններին ծանոթանալիս դրանց լուսանկարահանումն իր հետ կհամաձայնեցվի, պահանջել է ծանոթացման համար ընտրել ընդամենը երեք փաստաթուղթ, թույլատրել է լուսանկարել դրանցից միայն մեկը, իսկ լրագրողի առարկությունից հետո դադարեցրել է տեղեկություններին ծանոթանալու գործընթացը:

Օրենքի առերևույթ խախտումները և Տեղեկատվության ազատության մասին օրենքի վերաբերելի կարգավորումները

Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքում հարցմամբ դիմողն իր ցանկությամբ կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով տեղում ծանոթանալ տեղեկությանը՝ հետ վերցնելով իր գրավոր հարցումը:

Ըստ վերոնշյալի՝

1. **Երևանի քաղաքապետարանի (ՀՈԱԿ-ի) կողմից տեղում ծանոթանալու ենթակա տեղեկության ծավալների սահմանափակումը Տեղեկավտության ազատության մասին օրենքի առերևույթ խախտում է:** Տեղեկատվության ազատության մասին օրենքը նախատեսում է գրավոր հարցման մեջ նշված ամբողջ տեղեկությանը տեղում ծանոթանալու հնարավորություն, չի սահմանում տեղում ծանոթանալու ենթակա տեղեկությունների **ծավալի որևէ սահմանափակում:**

2. **Երևանի քաղաքապետարանի (ՀՈԱԿ-ի) կողմից տեղում ծանոթանալու ենթակա տեղեկության լուսանկարահանումը համաձայնեցնելու, ծանոթացման ենթակա տեղեկության ամրագրման թույլտվություն տալու պայմանները Տեղեկավտության ազատության մասին օրենքի առերևույթ խախտում են:** Տեղեկատվության ազատության մասին օրենքը, ինչպես նաև դրանից բխող ենթաօրենսդրական ակտերը չեն նախատեսում տեղում ծանոթանալու ենթակա տեղեկություններին ծանոթանալու կամ դրանք ամրագրելու **ձևի կամ կրիչի որևէ սահմանափակում:**

Խնդրի հնարավոր լուծումները

Տեղեկատվության ազատության մասին օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն տնօրինողն ի թիվս այլնի պարտավոր է օրենքով սահմանված կարգով տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն: Նույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ոչ հավաստի կամ ոչ լրիվ տվյալներ պարունակող տեղեկություն տրամադրած մարմինը կամ կազմակերպությունն այդ տեղեկությունն ստացած անձի գրավոր հարցման հիման վրա *պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով անվճար տրամադրել ճշգրտված տվյալներով տեղեկություն:*

Լրագրողի նկարագրած դեպքում Տեղեկատվության ազատության մասին օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասով նկարագրված գործողությունը (դիմողի ցանկությամբ գրավոր հարցմամբ պահանջված տեղեկությանը տեղում ծանոթանալը) *փաստացի չի իրականացվել,* լրագրողի հարցմամբ պահանջված տեղեկությունը չի տրամադրվել Տեղեկատվության ազատության մասին օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով, հետևաբար, Տեղեկատվության ազատության մասին օրենքով սահմանված տեղեկություն ստանալու գործընթացը չի ավարտվել, իսկ ***լրագրողը չի ստացել հարցումով նախապես պահանջված բոլոր (ամբողջական, լրիվ) տեղեկությունները և խախտվել է նրա տեղեկություն ստանալու իրավունքը:***

Արդյունքում, լրագրողը կարող է Տեղեկատվության ազատության մասին օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով կրկնակի հարցմամբ դիմել Երևանի քաղաքապետարանին, նշել Տեղեկատվության ազատության մասին օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով հարցմամբ պահանջված ամբողջական (լրիվ) տեղեկությունները չստանալու մասին և կրկին պահանջել տրամադրել նախորդիվ ակնկալած ու չստացած տեղեկությունները:

Լրագրողի նկարագրած խնդրի լուծում է նաև Երևանի քաղաքապետարանի կողմից Տեղեկատվության ազատության մասին օրենքի խախտման դատական բողոքարկումը:

Կազմեց ԻԱԿ փորձագետ
Գևորգ Հայրապետյանը